

## ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի ռեկտորատի 2016թ. մարտի 14-ի  
նիստի /արձանագրություն N 12/

1. «Պատմություն և արդիականություն» խորագիրը կրող գիտաժողովի նախապատրաստման ընթացքը համարել բավարար,
  - 1.1 սույն գիտաժողովն անցկացնել մարտի 29-ին: Զեկույցների համար առավելագույն տևողությունը սահմանել 15 րոպե:
2. «Դերասանական արվեստ » մասնագիտության մագիստրատուրայի II կուրսի նախկին ուսանող Սամվել Թադևոսյանի հեռացման հրամանը թողնել անփոփոխ:
3. Հիմք ընդունելով ԵԹԿՊԻ-ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի 3.15 կետը, ներքոհիշյալ ուսանողներին հատկացնել դրամական օգնություն հետևյալ չափերով՝
  - 3.1 Վարդանյան Վռամ Վոլոդյայի (կինոարվ. I կուրս) – 100 000 դրամ
  - 3.2 Սանթուրյան Անահիտ Անդրանիկի (դերաս. I կուրս) – 100 000 դրամ
  - 3.3 Շողիկյան Ռոբերտ Գրիգորի (օպեր. II կուրս) – 100 000 դրամ
  - 3.4 Սարգսյան Արմեն Հենրիխի (մագիստր. I կուրս) – 100 000 դրամ
4. Ս.թ. ապրիլի 6-ին ռեկտոր Դ. Մուրադյանին, պրոռեկտոր Վ. Եղիազարյանին և Դերասանի վարպետության և ռեժիսուրայի ամբիոնի վարիչ Ռ. Բաբայանին գործուղել Վանաձորի մասնաճյուղ աշխատանքային այցով, Ռուբեն Բաբայանին՝ վարպետության դասեր անցկացնելու նպատակով,
  - 4.1 ԵԹԿՊԻ-ի Վանաձորի մասնաճյուղին հատկացնել մեկ համակարգիչ,
  - 4.2 Հանձնարարել Հ. Ավագյանին պարզել Վիվասել ՄՏՍ-ի կողմից վաճառքի հանված համակարգիչների գնման հնարավոր տարբերակները:
5. Հավանություն տալ «Ավարտական ստուգաշրջան անցկացնելու ընթացակարգի» նախագծին և ներկայացնել գիտական խորհրդի քննարկմանը:

6. 2016-2017 ուս. տարում Հեռակա ֆակուլտետի Ռեժիսուրա մասնագիտության շրջանակներում ընդունելություն կատարել «Կրկեսի և էստրադայի ռեժիսուրա» մասնագիտությամբ:

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան